

ԱՊՐԻԼ 24-Ի ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Posted on April 22, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 18 Ապրիլ 2020

Նկար՝ Եղիշէ Թաթեւոսեանի

Այս տարի կը լրանայ նոր ժամանակներու մեծագոյն հայ հոգեւորականներէն եւ յեղափոխականներէն Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Խրիմեան Հայրիկի ծննդեան 200-ամեակը: Հայ ժողովուրդը նշանաւոր հոգեւորականներուն տուած է իր սրտէն բխած մակդիրներ՝ Գրիգոր **Լուսաւորիչ**, **Մեծն** Ներսէս, **Սուրբ** Գրիգոր Նարեկացի, Ներսէս **Շնորհալի**, Գրիգոր **Շղթայակիր** Պատրիարք (Երուսաղէմ), Վազգէն **Շինարար** եւ այլն: «Հայրիկ»ը ազգին սրտէն ու հոգիէն բխած ամենէն անպաճոյճ եւ սակայն ամենէն յատկանշական մակդիրն էր՝ տրուած իր իսկ ծոցէն ծնունդ առած այս **Մեծ** Վանեցիին:

Այս յոբելեանէն կը բխին երկու թելադրանքներ Ցեղասպանութեան տարելիցի նախօրէին:

Ա.- Խրիմեան Հայրիկի նշանաւոր գործերէն «Պապիկ եւ Թոռնիկ»ին մէջ շինական պապիկը իր թոռնիկին ձեռքէն բռնած կը տանի արտ եւ կ'ըսէ, թէ ինք **ա՛յս** հողին հետ կ'ամուսնացնէ զայն եւ այսուհետեւ անոնք կ'ըլլան մէկ սիրտ եւ մէկ հոգի:

ՀՈՂԸ՝ հայրենիքն է, մեր նախնիներուն շիրիմներն են, մեզի կեանք տուող մայրն է, պատմութիւնն է ու ապագան: Հողը կորսնցուցի՞նք՝ շուտով կը կորսնցնենք նաեւ ազգային միւս յատկանիշները:

2020-ը եւ յաջորդ տարին յոբելեաններու տարի է.

20 Օգոստոս 1920՝ Սելրի դաշնագիր

3 Դեկտեմբեր 1920՝ Ալեքսանդրապոլի (Խայտառակ) դաշնագիր

16 Մարտ 1921՝ Մոսկուայի դաշնագիր

13 Հոկտեմբեր 1921՝ Կարսի պայմանագիր

Բացի Սելրի դաշնագրի **խոստացած, բայց թուղթի վրայ մնացած** հայանպաստ որոշումներէն, միւս երեքին պարագային մենք կորսնցուցինք այն ՀՈՂԸ, որուն հետ Խրիմեան Հայրիկի Պապիկը կ'ամուսնացներ իր թոռնիկը:

Պարտադրանքով կամ առանց հայութեան մասնակցութեան տրուած են ճակատագրական որոշումներ: Այսինքն՝ օտարներն են չափեր, ձեւեր ու կարեր մեր սահմանները: Օտարին յանձնուած ՀՈՂԻՆ պահանջը Էութիւնը կը կազմեն մեր **ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹԵԱՆ**, որովհետեւ այդ կը թելադրէ Հայ դատի իրական ու շօշափելի հետապնդումը: Պատմութիւնը եւ անցեալի փորձը կը թելադրեն կեդրոնական **իրականանալիին** վրայ եւ դղեակներ չկառուցել օդին մէջ:

Երկրագունդի կարգ մը պետութիւններու տուած որոշումները Հայկական

ցեղասպանությունը դատապարտելու ուղղությամբ՝ բարոյական, բայց անհեռանկար յաղթանակներ է անդին չեն երթար, այլ մեզի «կը պարզեւեն» խաղաղ քուն եւ ինքնաբաւարարում միայն: Քաղաքական իրապաշտութիւն կոչուած հասկացութիւն մը կայ, զոր կարելի չէ արհամարհել, այլ անոր վրայ պէտք է հիմնել յառաջիկային մեր առնելիք քայլերը եւ անո՛նց մէջ պէտք է ներդնենք մեր ջանքերը:

Բ.- Խրիմեան Հայրիկի կերպարն ու յոբելեանը կը թելադրեն նաեւ անաչառ գնահատման ենթարկել աւելի քան տասնեօթ դարու անցեալ ունեցող եւ փառաւոր ծառայութիւն մատուցած Հայաստանեայց եկեղեցւոյ **վերջին տասնամեակներու գործունեութիւնը**: Այս յառաջադրանքով եւ մա՛նաւանդ արդար արժեւորման նախանձախնդրութեամբ, Հայ եկեղեցին, իր գանազան յարանուանութիւններով, մեր դիմաց կը պարզէ յաճախ խոցելի եւ իր առաքելութեան անյարիր գործունեութեան մը պատկերը:

Ցեղասպանութեան ենթարկուած միլիոնաւոր հայերը զոհուեցան նաեւ իրենց հաւատքին ու Հայաստանեայց եկեղեցիին չդաւաճանելու համար, հետեւաբար յաջորդող սերունդները եւ մենք այսօր **բարոյական իրաւունքն** ունինք պահանջելու, որ այս մեծ կառոյցը, որ յաճախ պետութեան դերն ստանձնած է, իր առաքելութիւնը կատարէ մեծ նախանձախնդրութեամբ, չվերածուի կղերապետութեան եւ անթափանցելի խորհրդաւոր հաստատութեան մը:

Մեր ճակատագրին տերը մե՛նք ենք, եւ մենք ալ պատասխան պէտք է տանք մեր արարքներուն համար:

There are no comments yet.